

# ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԿԵՐԱՎ



ԱՊՐԻԼ

**Ծարաք, 2 Ապրիլ.**- «Սրբոց Յովիաննու Եռոսադիմայ Հայրապետին և Հայրապետին մերոյ Յովիաննու Օճնեցւոյն և Վարդապետացն մերոց Յովիաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տարեւացւոյն». Սուրբ պատարազը մատուցուեցաւ Մայր Տաճարի Գլխադրի Խորանին վրայ; Ժամարարն էր Տ. Ղետնդ Վրդ. Յովիաննիսեան:

**Կիրակի, 3 Ապրիլ.**- Դ. Կիրակի Քառանորդաց, Տնտեսին: Գիշերային և առաօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յակով Մայր Տաճարի մեջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանի Հիւսիսակողմը զունուղ Ս. Աստուածածնի Խորանի առաջ: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպերնեան: Քարոզեց Տ. Շնորհը Վրդ. Քալոյեան:

**Հինգշաբթի, 7 Ապրիլ.**- Երեկոյեան իրակումին ի Ս. Յակով քարոզեց Տ. Գեղամ Ծ. Վրդ. Զարարեան:

**Ծարաք, 9 Ապրիլ.**- Գիշերային և առաօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յակով, որմէ յետոյ մատուցուեցաւ Ս. Պատարագ Գլխադրի Մատարն մեջ: Ժամարարն էր Տ. Տ. Թեղորոս Վրդ. Զարարեան: Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն այս օրերուն Արցախի մեջ տեղի ունեցող կոհիներուն սպաննուած հայ զինուրերու և սահմանամերձ շրջաններու մեջ ապրող ազերիի զնդակով մահացած հայ բնակիչներու հոգոցն փրկութեան համար:



Ս. Գլխադրի Խորանը

Կեսօրէ վերջ յաջորդ օրուան Դատաւորի Կիրակիի առքին Տ. Սեւան Արք. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միարանուրինը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանին և Գիտ Խաչի Այրի Ուխտէն ետք վերջնոյն կից հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեջ պաշտուեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու նախաւոնակը:

**Կիրակի, 10 Ապրիլ.**- Ե. Կիրակի Քառանորդաց: Դատաւորին. առաօտեան ժ. 6:45-ին միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեջ պաշտուեցան գիշերային և առաօտեան ժամերգութիւնները, ապա Ամեն. Արքազան Պատրիարք Հայրը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ Ս. Պատարագ Մատուցուց եւ քարոզեց եւ ապա նախազահեց Ս. Գերեզմանին և Պատանատելուոյն շորջ կատարուած եռադարձ մեծահանդէս քափօրին, որ վերջացաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեջ:

**Հինգշաբթի, 14 Ապրիլ.**- Իրիկուան իրսկումին ի Ս. Յակով քարոզեց Տ. Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան:

**Որբար, 15 Ապրիլ.**- Յաջորդ օրուայ նախաւոնակին ի Ս. Յակով նախազահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

**Ծարաք, 16 Ապրիլ.**- «Սրբոց Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորիչն. Յիշատակ չարչարանց և մտանելոյն ի Վիրապն»: Գիշերային և առաօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յակով Մայր տաճարի մեջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Մայր Տաճարի Աւանդատան Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գազագեան:

**Կիրակի, 17 Ապրիլ.**- Զ. Կիրակի Քառասնորդաց: Գալստեան. առաօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Յակով Մայր Տաճարին մեջ, որմէ յետոյ միարան հայրեր և ժառագաւոր սաներ մեկնեցան Արեւմտեան Երուսաղէմ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեջ: Պատարագէց Տ. Շնորհը Վրդ. Քալոյեան, քարոզեց Տ. Վազգեն Արք. Ալեքսան:

**Չորեքշաբթի, 20 Ապրիլ.**- Յաջորդ օրուայ տօնի նախաւոնակին ի Ս. Յակով նախազահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

**Հինգշաբթի, 21 Ապրիլ.**- «Աւետումն Ս. Աստուածածնի»: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ Ս. Յակով Մայր Տաճարի մեջ,

որմէ յետոյ նախագահութեամբ S. Սեւան Աքք. Ղարիպեանի միարան հայրեր ինքնաշարժով մեկնեցան Գերսեմանի մորը և «Հրաշափառ»ով մուտք գործեցին U. Աստուածածնայ Տաճարը: U. Կոյսի գերեզմանին վրայ մատուցեցաւ U. Պատարագ, եպիսկոպոսական խոյր ի զլոյս պատարացեց S. Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան:

Իրիկուան ժամը 7:00-ին Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Սեծ Պահոց հսկումի վերջին ժամերգութիւնը: Քարոզեց S. Ղետնդ Վրդ. Յովհաննիսեան:

**Ուրբար, 22 Ապրիլ.**- Խ. օր մեծ Պահոց: Առաօսուն Մայր Տաճարի մէջ պաշտուեցաւ «Արեւագալ»ի վերջին ժամերգութիւնը:

**Չարաք, 23 Ապրիլ.**- «Յիշատակ Յարութեան Ղազարու»: Գիշերային և Առաօսուն ժամերգութիւնները պաշտուեցան Մայր Տաճարի մէջ, ապա մատուցուեցաւ U. Պատարագ Գլխադրի խորանի վրայ: Ժամարաբն էր S. Գեորգ Աքք. Հայրապետեան: Պատրիարք Սրբազնի գլխատրութեամբ միարանութիւնը մեկնեցաւ դէպի Յեղասպանութեան յուշածան, որ կարդացուեցաւ վերջին Աւետարանը:

Կէսօրէ վերջ, յաջորդ օրուայ Ծաղկագարդի տօնին առին միարանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց U. Յարութեան տաճար՝ գլխատրութեամբ S. Սեւան Աքք. Ղարիպեանի որ նախագահեց մեր Վերնամատրան մէջ պաշտուած ժամերգութեան և նախատօնակին ու պաշտօնական զնացքով վերադարձաւ Մայրավանը:

**Կիրակի, 24 Ապրիլ.**- Ծաղկագարդ. առաօսուն ժամը 6:45-ին հանդիսապետութեամբ S. Արիս Աքք. Շիրվաննեանի միարան հայրեր մեկնեցան U. Յարութեան Տաճար, Պատանատեղույն և Գողգորայի վրայ կատարուած ոխտէն յետոյ քարձրացան վանքապատկան Վերնատունը, որ պաշտուեցան գիշերային և առաօսուն ժամերգութիւնները, ապա մատուցուեցաւ U. Պատարագ: Ժամարաբն էր S. Ներսէս Վրդ. Աղոյեան: Ժ. 9:45-ին երկրորդ մուտքին նախագահեց S. Սեւան Աքք. Ղարիպեան: Ապա կատարուեցաւ մեծահանդէս քափօր Քրիստոսի U. Գերեզմանին և Պատանատեղույն շորջ: Թափօրականը իրենց ծեռքին ունէին արմաւենեաց և ծիրենեաց ոստեր, իսկ մեր քափօրին կը հետևէին Ղպսոց և Ասորոց քափօրները: Կէսօրէ ետք ժամը 1:30-ին միարանութիւնը վերադարձաւ Մայրավանը և «Որ գլխորհուրդ» շարականը երգելով

քարձրացաւ Պատրիարքարան:

Կէսօրէ ետք ժամը 5:00-ին, տօնական օրերու իր շրեն հանդերձանքով Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան»: Ապա պաշտուեցաւ Երեկոյեան ժամերգութիւնը ընդիջուած տօնին յատուկ հոգեզուարձ մեղեղիներով և շարականներով, և «Ուռացելք»ի յոյժ սրտազրաւ արարողութիւնը, բոլորն ալ նախագահութեամբ Ամեն. Պատրիարք U. Հօր: Այս առին S. Կորին Վրդ. Բաղդասարեան կարդաց անուանացանկը վարագոյրներու բացման մասնակցող բարեպաշտ հաւատացեալներու: Նախորդ տարիններու նման այս տարի ես եկեղեցւոյ գոյս մուտքերուն դրուած էին պնակներ, որոնց պարունակութիւնը պիտի որկոյի Լիքանանի Ազունի հիւանդանոցը:

**Երեքշաբթի, 26 Ապրիլ.**- Յիշատակ վասն Կուսանաց: Գիշերային ժամերգութիւնը պաշտուեցաւ Մայր Տաճարի մէջ, ապա միարան հայրեր մեկնեցան U. Յարութեան Տաճար, ըստ սովորութեան U. Պատարագ մատուցուեցաւ Գափիրին վրայ բացուղ U. Յովհաննէս Աւետարանչի հայապատկան մատրան մէջ: Ժամարաբն էր S. Վանիկ Վրդ. Մանկասարեան: S. Թէոդորոս Վրդ. Զարարեան նախագահեց տաճարէն ներս կատարուած Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան քափօրին, անոր իրաքանչիւր հանգրուանին բացատրութիւններ տալով ուխտաւոր հաւատացեալներուն:

**Հինգշաբթի 28 Ապրիլ.**- Աւագ Հինգշաբթի: Յիշատակ Ընթրեաց Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի: Մայր Տաճարի մէջ պաշտուեցան գիշերային և առաօսուն ժամերգութիւնները, ապա կատարուեցաւ U. Պատարագ: Ժամարաբն էր S. Ներսէս Վրդ. Աղոյեան: Ժ. 9:45-ին երկրորդ մուտքին նախագահեց S. Սեւան Աքք. Ղարիպեան: Ապա կատարուեցաւ մեծահանդէս քափօր Քրիստոսի U. Գերեզմանին և Պատանատեղույն շորջ: Թափօրականը իրենց ծեռքին ունէին արմաւենեաց և ծիրենեաց ոստեր, իսկ մեր քափօրին կը հետևէին Ղպսոց և Ասորոց քափօրները: Կէսօրէ ետք ժամը 1:30-ին միարանութիւնը վերադարձաւ Մայրավանը և «Որ գլխորհուրդ» շարականը երգելով

ժամը տասին մատուցուեցաւ հանդսաւոր U. Պատարագ. Ժամարաբն էր S. Արիս Աքք. Շիրվաննեան: «Հայր մեր»էն առաջ կարդացուեցաւ U. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ճառը գերազանցօրէն վեհ և շինիշ խրատներով լի: Բազմարի հաւատացեալներ մասնակցեցան հաղորդութեան մէծ խորհուրդին:

Կէսօրէ վերջ Մայր Տաճարին մէջ Ամեն. U. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Ուտնալուայ»ի արարողութիւնը: Ներկայ էին բազմարի օտար հրամիքաներ, պիտական և զինուորական դմբեր, ինչպէս նաև Անգլիքան Գերշ. Արքային կոպոսը, որ ըստ սովորութեան արարողութեան աւարտին զգեստատրուելով քարձրացաւ Աւագ

Խորան, որկէ Անգերէն լեզուով կարդաց Ոտնալուայի վերաբերեալ Ս. Գրային համարները:

Ժամը հինգին փոքր թափօր մը այցելեց Ս. Հրեշտակապետաց եկեղեցին (Ա. բանտը Քրիստոսի): Թափօրը կը զիսաւորէին S. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան: Ս. Զիրենեաց ծառին առջև կատարուած Աւետարանի ընթերցումն ետք Հ. Պարետ քարոզեց վանքի փակն ու տաճիրները հաւարուած ժողովուրդին, յետոյ թափօրը մեկնեցաւ Ս. Փրկիչ (Բ. բանտը Քրիստոսի), այնտեղ Աւետարանի ընթերցումն ետք քարոզեց S. Թէոդորոս Վրդ. Զարարեան:

Իրիկուած ժամը 7:00-ին մինչեւ կէս զիշեր Մայր Տաճարի մէջ պաշտուեցաւ «Խաւարման կարգը» տիխազդեցիկ խորիդաւորութեամբ նախազահուրեամբ Ամեն. Սրբազն Պատրիարք Հօր: «Փառք ի քարձումն» են ետք քարոզեց Պոլսոյ Պատրիարքական Փոխանորդ Տ. Արամ Արք. Արեշեան:

**Ուրբար, 29 Ապրիլ.** Աւագ Ուրբար: Յիշատակ շաշշարանաց, խաչելութեան և քաղման Տեառն մերոյ Յիշատի Քրիստոսի:

Կէսօրէն ետք ժամը 1:00-ին միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար և հայապատկան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ պաշտուեցաւ Խաչելութեան կարգը՝ Տ. Սամուել Ծ. Վրդ. Աղոյեանի նախազահուրեամբ:

Ժամը հինգին Մայր Տաճարի մէջ պաշտուեցաւ հանդիսաւոր «Խաղման կարգը» նախազահուրեամբ Ամեն. Պատրիարք Սրբազն Հօր:

**Ծարար, 30 Ապրիլ.** Նրազալոյց Զատկի. Ս. Յակոպ Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ զիշերային ժամերգութիւն: Առաւուեան ժամը 9:15-ին փոքր թափօր մը, զիսաւորութեամբ Աւագ Թարգմանի, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, կատարելու համար Տաճարի դրան բացման աւանդական ծեւակերպութիւնը:

Ժամը 11:15-ին Ամեն. Ս. Պատրիարք Հօր զիսաւորութեամբ միարանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, որ յաջորդարար կատարուեցան Լուսաւորեայի հանդիսութիւնն ու յարակից հանդիսութիւնները:

Ժամը 1:00-ին Յունաց Ամեն. Պատրիարքն ու մեր Լուսահան Տ. Ասպետ Վրդ. Պայեան զգեստաւորուած մտան Ս. Գերեգման, որկէ քառորդ ժամ մը ետք դուրս պիտի զար նուիրական լոյսը, որով պիտի լուցուէն:

Տաճարէն ներս խոնուած բազմազի եւ բազմահազար հաւատացեալներու մոմերը, ստեղծելով ընդհանուր խանդավառութեան մբնուրու մը, մինչ զուարքորէն կը դողանչէին յունական եւ հայկական բոլոր զանգերն ու կոչնակները Տաճարին: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը մեր Վերնատան պատշզամէն նուիրական լոյսով կ'օրինի հաւատացեալները, մինչ Ս. Գերեզմանին շորջ ընթացք կ'առնի մեր թափօրը՝ Տաճարին կամարները բնդացնելով Յարութեան աւետիսը փառերգող շարականով: Թափօրը կը զիսաւորէր Հոգ. Լուսահան Հայրը, որ կը կրէր եպիսկոպոսական խոյր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղալոց եւ Ասորոց թափօրները: Ժամը 2:30-ին միարանութիւնը շրերով վերադարձ Մայրավանը: Դարի թերոյին դիմաց Ամեն. Պատրիարք Հայրը եւ Հոգ. Լուսահանը զգեստաւորուեցան, մինչ դպիրներ սկսան երգել «Քրիստոս Յարեա» շարականը, որով թափօրը մտար զործեց Մայր Տաճարը:

Կէսօրէն ետք ժամը 5:00-ին Մայր Տաճարի մէջ սկսան ճրազալոյցի արարողութիւնը, ապա մատուցուեցաւ Ս. Պատրարք Աւագ Սեղանին վրայ: Յարութեան սրտառուչ աւետիսին հետ կը բացուի երկնագոյն ու նրարուեստ փարազոյրը Աւագ Խորանին՝ ի յայտ թերելով բովանդակ շրեղանը անոր, առաւել փայլ մը զգեցած պատուհաններէն ներս թափանցած արեգակի ոսկէ շառայլներուն տակ: Ժամարան էր Կ. Պոլսոյ միարան հայրերէն Տ. Եղիշէ Վրդ. Ուշգումնան: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախազահեց Ս. Զատկի նախատօնակին, որմէ յետոյ «Այսօր Յարեա» շարականը երգելով միարանութիւնը թարձրացաւ ընթրիիք:



Քրիստոս յարեա ի մեռնելոց

## ՍԱՅԻԾ

**Կիրակի, 1 Մայիս.-** Զատիկ, Յարուբին Տեսոն մերոյ: Առաօտեան ժամը 2:30-ին զիսատրութեան S. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի, միարան հայրեր մեկնեցան U. Յարուբին Տաճար, որ հայապատկան Վերնամատրան մէջ պաշտուեցաւ զիշերային ժամերգորինը: Ապա Միարանուրինը զգեստաւորուած իջաւ U. Գերեզմանի շրջափակը, որ կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս քափօր U. Գերեզմանի և Պատանատեղոյն շուրջ, նոյն ատեն պաշտուեցաւ առաօտեան ժամերգորին, իսկ U. Գերեզմանի առջեւ կատարուեցան «Անդաստան», նախազահութեամբ S. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի: Մեր քափօրին կը հետեւէին Դպտաց և Ասորոց քափօրները: Ժամը 8:00-ին Քրիստոսի U. Գերեզմանին վրայ մատուցեցաւ U. Պատարագ: Պատարագեց և օրուան խորհուրդը նիւթ ունենալով քարոզեց Կ.Պոլսոյ Պատրիարքական Փոխանորդ՝ S. Արամ Արք. Արէշեան: Բազմարի հաւատացեալներ ստացան U. Հաղորդուրինը: Ժամը 10:30-ին Միարանուրինը վերադարձաւ Մայրավանը և «Քրիստոս յարեա» շարականը երգելով քարձրացաւ Պատրիարքարան:

Կեսօրէ վերջ ժամը 4:00-ին, Մայրավանի մեծ քակին մէջ կատարուեցաւ Զատկական մեծ «Անդաստան»ը, հանդիսապետութեամբ Ամենապատի Պատրիարք Հօր:

**Երկուշաբթի, 2 Մայիս.-** Երկորորդ օր Զատկի: Գիշերային և առաօտեան ժամերգորինները պաշտուեցան Մայր Տաճարի մէջ: Ապա մատուցուեցաւ U. Պատարագ Մայր Տաճարի Աւագ Խորանին վրայ: Ժամարան էր S. Սեւան Արք. Դարիպեան: Ապա Ամեն. Պատրիարք Հայրը քարոզեց յատը պատշաճի և քարի ճանապարհ մաղթեց Հայաստանէն, Քանատայէն և Կ.Պոլսուն եկած ուխտաւորներուն: U. Պատարագէն եռք, ամպինվանիի ներքեւ, կենաց փայտի ճաճանչագեղ մասունքն ի ձեռին, նախազահեց Մայր Տաճարի մէջ կատարուած եռադարձ մեծահանդէս քափօրին, որոն աւարտին երգուեցաւ «Տե՛ր ողորմեա» և «Ճանապարհ»ը՝ ուխտաւորներուն քարի ճանապարհ մաղթելու համար յատկապէս: Ապա «Քրիստոս յարեա ի մեռելոց» շարականը երգելով միարանուրին և ժողովուրդ քարձրացան Պատրիարքարան, որ Արքազան Պատրիարքը «Պահպանիշ»ով իր օրինուրինը տալէ եռք քամնեց բոլորին U.

Պատարագի մէկական նշխար:

**Երեքշաբթի, 3 Մայիս.-** Յիշատակ Մելուլոց: U. Պատարագը մատուցուեցաւ Արքոց Յակոբեանց Մայր Տաճարի U. Գլխադրի Մատրան մէջ: Ժամարան էր S. Էմմանուէլ Վրդ. Արաջանեան: U. Պատարագէն եռք կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն խնդրամատոյց ոխտաւորներու ննջեցեալներու հոգիններուն համար:

**Չարաք, 7 Մայիս.-** Յիշատակ Գլխատման Արքոյն Յովհաննու Կարապետին: Գիշերային և առաօտեան ժամերգորինները պաշտուեցան U. Յակոր, ապա մատուցուեցաւ U. Պատարագ Աւագ Խորանի աջակողմը գտնուող U. Կարապետի Խորանի առջեւ: Ժամարան էր S. Տաճար Վրդ. Ծատուրեան:

**Կիրակի 8 Մայիս.-** Նոր Կիրակէ (Կրկնազատիկ): Գիշերային և առաօտեան ժամերգորինները պաշտուեցան ի U. Յակոր, հանդիսատր Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ըստ աւանդութեան ժամարանը էր լուսահան S. Ասպետ Վրդ. Պալեան:



**Չարաք, 14 Մայիս.-** Գիշերային և առաօտեան ժամերգորինները պաշտուեցան U. Յակոր Մայր Տաճարի մէջ, որմէ յետոյ մատուցուեցաւ U. Պատարագ Գլխադրի Մատրան մէջ: Ժամարան էր S. Աւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կեսօրէ վերջ ժամը 3:00-ին S. Սեւան Արք. Դարիպեանի զիսատրութեամբ Միարանուրինը «Հրաշափառ»ով մուտք գործեց U. Յարութեան Տաճար, որ պաշտուեցան երեկոյեան ժամերգորինն ու Նախատօնակը մէր Վերնամատրան մէջ: Ապա կատարուեցաւ

Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր բափօր Տաճարէն ներս, զիխաւորութեամբ S. Էմմանուէլ Վրդ. Արաջանեանի:

**Կիրակի, 15 Մայիս.**- Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ). առաւոտեան ժամը 6:15-ին S. Արիս Արք. Շիրվանեանի զիխաւորութեամբ Միարանուրինը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Գիշերային եւ առաւոտեան ժամերգութինները պաշտոնեցան մեր Վերնամատրան մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Քրիստոսի Գերեզմանին վրայ: Պատարագեց եւ յատոր պատշաճի բարողեց Տ. Արիս Արք. Շիրվանեան, ապա ան Ս. Պատարագէն յետոյ նախազահեց Ս. Գերեզմանի ատեանին մէջ կատարուած «Անդաստան»ին:

**Ծարար, 21 Մայիս.**- Գիշերային ժամերգութինը պաշտոնեցաւ ի Ս. Յակոր, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Գիխաղի Մատրան մէջ: Ժամարարն էր S. Աղան Արք. Գողեան:

**Կիրակի, 22 Մայիս.**- (Կարմիր Կիրակէ). առաւոտեան ժամերգութինը պաշտոնեցաւ ի Ս. Յակոր, ապա միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, Ս. Պատարագ մատուցուեցաւ Տաճարի մեր Վերնամատրան մէջ: Ժամարարն էր S. Կորին Վրդ. Բաղդասարեան: Երրուղարձի բափօրներուն նախազահեց Տ. Արիս Արք. Շիրվանեան:

**Ծարար, 28 Մայիս.**- Գիշերային եւ առաւոտեան ժամերգութինները պաշտոնեցան ի Ս. Յակոր, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Ս. Գիխաղի մատրան մէջ: Ժամարարն էր S. Նորայր Վրդ. Գազագեան:

**Կիրակի, 29 Մայիս.**- Տօն Երեման Սրբոյ Խաչի: Գիշերային եւ առաւոտեան ժամերգութինները պաշտոնեցան ի Ս. Յակոր: Ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Աւագ Խորանին վրայ: Ժամարարն էր S. Շնորհ Արդ. Բաղյեան: Կարդացուեցաւ Ս. Բարսեղ Հայրապետի Կոստանդ կայսեր ուղղուած Թուղթը Ս. Խաչի լուսաւոր Երեմանին առիրով: Ապա Սեղանին վրայ կը տեսնուիր Ս. Խաչին նշանը՝ վառ կանթեղներով զարդարուն:

## ՅՈՒՆԻՍ

**Ծարար, 4 Յունիս.**- Գիշերային եւ առաւոտեան ժամերգութինները նաշտոնեցան ի Ս. Յակոր, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Գիխաղի խորանին վրայ: Ժամարարն էր S. Գեորգ Արդ. Հայրապետեան:



Օտար հաւատացեալներ կ'այցելեն  
Ս. Յակոր Մայր Տաճար

**Կիրակի, 5 Յունիս.**- Առաւոտեան ժամերգութինը պաշտոնեցաւ Ս. Յակոր Մայր Տաճարի մէջ, ապա միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագ մատուցուեցաւ Տաճարի մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր S. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Երբ ու դարձի բափօրը դեկազարեց Լուսարարապետ S. Սեղան Արք. Ղարիպեան:

**Չորեցարքի, 8 Յունիս.**- Յաջորդ օրուայ Համբարձման տօնին առիրով, կեսօրէ վերջ ժ. 2:00-ին Ամեն. Պատրիարք Հօր զիխաւորութեամբ միարան հայրեր ինքնաշարժով բարձրացան Զիրենեաց լեռ, որ Համբարձման սրբավայրի շրջափակին մէջ պաշտոնեցան երեկոյեան ժամերգութինն ու մեծահանդէս նախատօնակր: Իրիկնադէմին պաշտոնեցան «Եկեսցէ»ի եւ Հակման կարգեր, ապա գիշերային եւ առաւոտեան ժամերգութինները, վերջինը սրբավայրի գներէն ներս: Արարդութինները վերջ գտան գիշերուան ժ. 1:00-ին:

**Հինգարքի, 9 Յունիս.**- Համբարձումն Տեսոն մերոյ Յիսուսի Քրիստոսի. առաւոտեան ժ. 6:45-ին Միարանուրինը ինքնաշարներով բարձրացաւ Զիրենեաց լեռ եւ «Հրաշափառով

## Զիրենեաց լեռ



մուտք գործեց Համբարձման սրբատեղին,որ մեր Վերնամատրան մէջ եպիսկոպոսական խոյր ի գլուխ օրուան հանդիսաւոր Սուրբ Պատարագը մատոյց եւ Համբարձման խորհուրդին շորջ քարոզեց Տ. Պարես Ծ. Վրդ. Երիցեան: Քարոզէն եռու Ամեն. Ս. Պատրիարք Հօր գլխաւորութեամբ կատարուեցաւ «Հայրապետական Մատրանք» Մայր Արքոյ Սիսէն Ս. Եջմիածին փոխադրութեան (1441) տարելարձի առիթով: Խոկ Ս. Պատարագէն եռու Հոգ. Պատարագիչ Հայր Սուրբը նախազահեց Սրբավայրին առջեւ կատարուած «Անդաստան»ին: Միարանորդից Վաճր վերադարձաւ կեսօրէ առաջ ժամը 1:00-ին:

**Չարաք, 11 Յունիս.-** Գիշերային եւ Առաւոտեան ժամերգործինները պաշտուեցան ի Ս. Յակոբ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Մայր Տաճարի հիսիսային կողմը զտնուող վերնայարկի Ս. Համբարձում մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կեսօրէ վերջ Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, երեկոյեան ժամերգործինները պաշտուեցաւ երկրորդ Ծաղկազարդի Նախատոնակը: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Նարիայեան:

**Կիրակի, 12 Յունիս.-** Երկրորդ Ծաղկազարդ: Գիշերային եւ Առաւոտեան ժամերգործինները պաշտուեցան Ս. Հրեշտակապետաց վանքին մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Ղետնդ Վրդ. Յովիաննիսեան:

**Չարաք, 18 Յունիս.-** Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց Վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Կորին Վրդ. Բաղդասարեան:

Կեսօրէ եռու, երեկոյեան ժամերգործինները յետոյ յաջորդ օրուայ Հոգեգալստեան Տօնի մեծահանդէս Նախատոնակին ի Ս. Յակոբ նախազահեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը եւ Կիսասարկաւագի աստիճան շնորհեց Ընծայրանի երեք շրջանաւարտներուն:

Իրիկնադէմին Մայր Տաճարի մէջ պաշտուեցան «Եկեսցէ»ի եւ Հսկման կարգերը: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Նարիայեան:

**Կիրակի, 19 Յունիս.-** Հոգեգալուստ (Պենտեկոստ): Գիշերային եւ Առաւոտեան ժամերգործինները պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ: Հանդիսաւոր Պատարագը մատուցուեցաւ Աւագ Խորանի վրայ: Եպիսկոպոսական խոյր ի գլուխ պատարագեց Տ.

Սամուել Ծ. Վրդ. Աղոյեան: Պատարագի ընթացքին «Առէ՛ կերէ՛»էն յետոյ կարդացւեաւ Ռոկերեան Հայրապետի Հոգեգալստեան ներբողը:

Կեսօրէ եռու ժամը 3:00-ին Միարան հայրեր մեկնեցան մեր գերեզմանատան մօս զտնուող Վերնատունը, որ կատարուեցաւ երեկոյեան ժամերգործինն, որմէ յետոյ Միարանորինը մտաւ Ս. Փրկիչի մեր գերեզմանատունը եւ հոգեհանգստեան պաշտօն կատարեց մեր Ս. Արքոյ հանգուցեալ Պատըրիարքներու հոգիններու հանգստեան համար: Երբ ու դարձի Թափօրներուն նախազահեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

**Չարաք, 25 Յունիս.-** Գիշերային եւ Առաւոտեան ժամերգործինները պաշտուեցան Ս. Յակոբ Մայր Տաճարի մէջ, ապա մատուցուեցաւ Ս. Պատարագ Գլխադրի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Պարես Ծ. Վրդ. Երիցեան:

**Կիրակի, 26 Յունիս.-** Սկիզբն Յարութեան Կիրակից եւ Յիշատակ Եղիայի մարգարէին: Առաւոտեան ժամերգործիննը պաշտուեցաւ Մայր Տաճար Ս. Յակոբի մէջ, ապա Միարան հայրեր մեկնեցան Ս. Յարութեան Տաճար: Ս. Պատարագը մատուցուեցաւ Տաճարի մեր Վերնատան մէջ: Ժամարարն էր Տ. Աւետիս Վրդ. Խփրանեան: Երբ ու դարձի Թափօրներուն նախազահեց Տ. Սեւան Արք. Նարիայեան:

Կեսօրէ եռու ժամը 1:00-ին յաջորդ օրուայ Հոփիսիմեանց տօնի նախատոնակին ի Ս. Հրեշտակապետաց նախազահեց Տ. Սեւան Արք. Նարիայեան:

**Երկուշաբթի, 27 Յունիս.-** Արքոց Կոսահանցն Հոփիսիմեանց: Գիշերային եւ Առաւոտեան ժամերգործինները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց, խոկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան Ս. Հոփիսիմեանց մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Նորայր Վրդ. Գաղագեան:

